խայ մինչև ցամուրն՝ որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք. զի աղու ձայնէին զնա:

Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ ի Պարթևէն Վաղարշակայ կողմնակալ բիւրաւոր: Ի սորա զաւակէ ասեն սերեալ զազգ Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծովդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն: (Խոր. Բ. Ը.):

չև ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յաղագս բարուց նորա անուանեցաւ Աղվանք. զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն:

Ի սորա ծննդոց Առանայ, ասեն, անուանիս և քաջս կարգեցան կողմնակալս բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ: Եւ ի սորա զաւակէն, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց և Գարդմանացւոց իշխանութեանց: (Մով. Կաղ. Ա. հատ. էջ 92):

Կաղանկայտուացին իր պատմութեան մէջ տեղ մը նաև կը յիշէ Խորենացին, Մովսէս Քերթողահայր ծանօթ անունով. ահա իր խօսքերը. « Յոյժ ցանկալի էր ըստ կարգաց գիտել զպատմածս, որ ինչ յԱռանայ նախագահութենէն ցայսօր* գործք. բայց արևելեայցս բազմազգութիւն ամբոխեալ ցուցանէ զորպէսն, (այսինքն թէ ինչպէս այն պատմութիւնները չնչուած, կորսուած կամ անյիշատակ մնացած են) և կտակարանացն հրկիզութիւնք. սակայն յայսմ վայրի նպաստաւորէ մեզ Քերթողահայրն Մովսէս (ի պատմէլն) զպատերազմելն Արտավազդայ ընդ Հռովմայեցիսն » : (Մով. Կաղ. Ա. հատ. էջ 97):

Պարզ է ուրեմն թէ Կաղանկայտուացին կատարելապէս կը ճանչնայ Խորենացին:

Բ

Ա. հասարակ ընդունուած է մեր մատենագրութեան պատմութեան մէջ՝ թէ Կաղանկայտուացին եօթներորդ դարէն է, ինչպէս վերը յիշուեցաւ. այս կարծիքն առաջին անգամ յայտնեց և հաստատեց Շահնազարեան Կարապետ վարդապետ՝ քննելով Կաղանկայտուացիին պատմութիւնը և դնելով այն գրքէն քանի մը օրինակներ իրրև ապացոյց իր ըսածին: Այս քննութիւնը մաս կը կազմէ այն ընդարձակ նախաբանին՝ զոր գրած է իր հրատարակած Կաղանկայտուացիին սկիզբը, և ուր կը խօսի Աղուաններու պատմութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան և լեզուին վրայ ընդարձակօրէն և մանրամասնաբար: Ահա իր խօսքերը.

« Հետազօտեալ իմ խնամօք ի գիրս իւր՝
« (Մովսիսի Կաղանկայտուացւոյ) գտի հա-
« ւաստի ցոյցս ըստ որոց մարթ է, անտա-
« բակուսաբար, համարել զնա կեցեալ ի
« սկզբան Է դարուն առ Վիրոյիւ կաթո-
« ղիկոսաւ, որում և ուղեկից եղև յերթալ
« նորա յողոյն Շաթի՝ արքայորդւոյն Խազ-
« բաց, և առ Ջևանշիր իշխանաւ: Ի գլուխն
« 18, Ա. գրոց, ի պատմէլն զաղանդոյն մատ-
« նահատութեան զոր երարձ արքայն Վա-
« չագան*, յաւելու « զոր բերեալ իսկ տե-
« սաք բազումք » : Ի պատմէլն զհանդիպումն
« Վիրոյի արքայորդւոյն Խազրաց, ասէ. Բ,
« 14. « անդ տեսաք զբազմոցս նոցա . . . և
« զընծայ ողջունին որ բարձեալ ի վերայ
« բազկաց մերոց » : Եւ ի գլուխն 28 նոյն
« Գրոց ի ճառէլն զհանդերձանաց պալատան
« Ջևանշիր իշխանին, այսպէս գրէ. « յայն-
« ժամ լինէր անդ համաշխարհական ժո-
« ղով . . . և տեսանէաք զթագաւորական
« հաւն . . . տեսաք օրհնիչ . . . ի գրօսանս
« խաղուց տեսանէաք . . . » : Դարձեալ ի
« գլուխն 32, որ յաղագս գիւտի Մեսրո-
« բեան խաչին** « զոր ոչ (միայն) մեք, այլ
« աշխարհ ամենայն եղեն տեսօղք » : Եւ զի
« փառաւոր իշխանն Ջևանշիր եկաց ի կէսն
« Է դարուն, զՄովսէս ևս համարելի է ժա-
« մանակակից նմին և տողեալ զպատմական
« գիրս իւր » : (Մով. Կաղ. Ա. հատ. յա-
ռաջաբան. էջ 82–83):

Գ

Շահնազարեան վարդապետին մէջ բերած օրինակներն արդարև բաւական զօրեղ են հաստատելու համար՝ թէ Կաղանկայտուացին կամ պատմուած դէպքերուն հեղինակը ով որ է, ականատես է այն դէպքերուն որ կը պատմէ: Ուստի առանց երկբայութեան կըրնանք զայն ժամանակակից դնել Վաչագան Բին, Տէր Աբասի, Ջուանշիրի և Եղիազար կաթողիկոսի:

* Այն է Վաչագան Բ բարեպաշան:

* Մոսկվայի տպ. դնէ՝ ցայսդ:

** Մեսրոպբեան խաչի գիւտն եղաւ Եղիազար կաթուղիկոսի օրով: